

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» դեկտեմբերի 2010թ.

N-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի եզրակացությունը, ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի թիվ 300 որոշմամբ.

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. «Հայաստանի թատերական գործիչների միավորում» հասարակական կազմակերպությանը /ՀՎՀՀ 02505418/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Մաշտոցի 13 հասցեում գտնվող շինության մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 1689.9 հազար դրամ գումարի չափով /ապառք՝ 1234.6 հազար դրամ, տույժ՝ 420.3 հազար դրամ, տուգանք՝ 35.0 հազար դրամ/:
2. «Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միավորում» հասարակական կազմակերպությանը /ՀՎՀՀ 02508776/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Դեմիրճյան 25 հասցեում գտնվող շինության մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 8924.5 հազար դրամ գումարի չափով /ապառք՝ 3784.4 հազար դրամ, տույժ՝ 1889.4 հազար դրամ, տուգանք՝ 3250.7 հազար դրամ/:
3. Հայաստանի ճարտարապետների միությանը /ՀՎՀՀ 00007258/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Բաղրամյան 17 հասցեում գտնվող շինության մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 380.6 հազար դրամ գումարի չափով /ապառք՝ 380.6 հազար դրամ/:
4. «Հայաստանի կինեմատոգրաֆիստների միավորում» հասարակական կազմակերպությանը /ՀՎՀՀ 02511007/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Վարդանանց 18 հասցեում գտնվող շինության մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 3544.6 հազար դրամ գումարի չափով /ապառք՝ 3137.9 հազար դրամ, տույժ՝ 406.7 հազար դրամ/:
5. «Հայաստանի գրողների միություն» հասարակական կազմակերպությանը /ՀՎՀՀ 00015135/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբեկտ համարվող,

Կենտրոն վարչական շրջանի Բաղրամյան 3 և Արաբկիր վարչական շրջանի Կասյան 3 հասցեներում գտնվող շինությունների մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 7735.6 հազար դրամ գումարի չափով /ապառք՝ 4206.9 հազար դրամ, տույժ՝ 3450.8 հազար դրամ, տուգանք՝ 77.9 հազար դրամ/:

6. Հայաստանի նկարիչների միությանը /ՀՎՀՀ 02511023/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Աբովյան 16 հասցեում գտնվող շինության մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 3616.7 հազար դրամ գումարի չափով /ապառք՝ 2598.0 հազար դրամ, տույժ՝ 1018.7 հազար դրամ/:
7. «Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպությանը /ՀՎՀՀ 01505571/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Իսահակյան 18, Քաջագնունի 1 և Վարդանանց 109 հասցեներում գտնվող շինությունների մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 2629.9 հազար դրամ գումարի չափով, /ապառք՝ 734.4 հազար դրամ, տույժ՝ 1.7 հազար դրամ, տուգանք՝ 1893.8 հազար դրամ/:
8. «Սիլվա Կապուտիկյան» գրական հիմնադրամին /ՀՎՀՀ 00078241/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Բաղրամյան անց. 1շ. 26բն. հասցեում գտնվող շինության մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 193.1 հազար դրամ գումարի չափով /ապառք՝ 84.0 հազար դրամ, տույժ՝ 37.7 հազար դրամ, տուգանք՝ 71.4 հազար դրամ/:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. «Հայաստանի թատերական գործիչների միավորում» հասարակական կազմակերպությունը Կենտրոն վարչական շրջանի Մաշտոցի 13 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով պատկանող, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շինության մասով՝ 01.01.2011թ. դրությամբ ունի 1689.9 հազար դրամ գումարի չափով գույքահարկի գծով հարկային պարտավորություններ /ապառք՝ 1234.6 հազար դրամ, տույժ՝ 420.3 հազար դրամ, տուգանք՝ 35.0 հազար դրամ/, որի համար 09.11.2010թ. հ. 25 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին՝ գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:
Հայաստանի թատերական գործիչների միավորումը ֆինանսական լուրջ խնդիրներ ունի և չի կարողանում լուծել՝ ոչ միայն ստեղծագործական հարցեր, այլև կատարել իր պարտականությունները՝ վճարել գույքահարկ:
2. «Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միավորում» հասարակական կազմակերպությունը Կենտրոն վարչական շրջանի Դեմիրձյան 25 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով պատկանող, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շինության մասով՝ 01.01.2011թ. դրությամբ ունի 8924.5 հազար դրամ գումարի չափով գույքահարկի գծով հարկային պարտավորություններ /ապառք՝ 3784.4 հազար դրամ, տույժ՝ 1889.4 հազար դրամ, տուգանք՝ 3250.7 հազար դրամ/, որի համար 21.10.2010թ. հ. ՀԿԵՄ-02/034 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին՝ գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:
Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միավորումը գտնվում է ֆինանսական սուղ պայմաններում և չի կարողանում լիարժեք զբաղվել ստեղծական գործունեությամբ, դրան զուգահեռ չի կարողանում կատարել իր պարտականությունները՝ վճարել գույքահարկ:
3. Հայաստանի ճարտարապետների միությունը Կենտրոն վարչական շրջանի Բաղրամյան 17 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով պատկանող, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շինության մասով՝ 01.01.2011թ. դրությամբ ունի 380.6 հազար դրամ գումարի չափով գույքահարկի գծով հարկային պարտավորություններ /ապառք՝ 380.6 հազար դրամ/, որի համար 27.09.2010թ. հ. 01/01 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին՝ գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:
Հայաստանի ճարտարապետների միությունը զբաղեցնում է Բաղրամյան 17 հասցեում գտնվող ճարտարապետների տունը, որը համարվում է պատմաճարտարապետական հուշարձան: Միությունը գտնվելով սուղ պայմաններում և չկարողանալով հայթայթել լրացուցիչ ֆինանսական միջոցներ չի կարողանում զբաղվել հասարակական և ստեղծագործական գործունեությամբ /գրքերի հրապարակում, թոշակառու ճարտարապետներին ֆինանսական օժանդակություն, ճարտարապետական հուշարձան համարվող շենքի պահպանում և այլն/, ինչպես նաև կատարել իր պարտականությունները՝ վճարել գույքահարկ:
4. «Հայաստանի կինեմատոգրաֆիստների միավորում» հասարակական կազմակերպությունը Կենտրոն վարչական շրջանի Վարդանանց 18 հասցեում գտնվող՝ սեփականության

իրավունքով պատկանող, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շինության մասով՝ 01.01.2011թ. դրությամբ ունի 3544.6 հազար դրամ գումարի չափով գույքահարկի գծով հարկային պարտավորություններ /ապառք՝ 3137.9 հազար դրամ, տույժ՝ 406.7 հազար դրամ/, որի համար 22.09.2010թ. հ. ԿՄ-46 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին՝ գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:

Հայաստանի կինեմատոգրաֆիստների միավորումը լինելով ոչ առևտրային հասարակական ստեղծագործական կազմակերպություն, այսինքն շահույթ չի հետապնդում և գուրկ է եկամուտ ստանալու հնարավորությունից, իսկ օրեցօր ավելացող խնդիրները՝ «ԵՍ ԵՄ» փառատոնի կազմակերպում, ֆիլմերի դիտումներ, կոնֆերանսներ, կլոր սեղաններ, գործուղումներ, «Կինո» ամսագրի թողարկում, կինոարվեստի գործիչներին նվիրված գրքերի հրատարակում և այլն, էլ ավելի են դժվարացնում և խորացնում ֆինանսական պայմանները, դրան գուգահեռ նաև չկարողանալով կատարել իր պարտականությունները՝ վճարել գույքահարկ:

5. «Հայաստանի գրողների միություն» հասարակական կազմակերպությունը Կենտրոն վարչական շրջանի Բաղրամյան 3 և Արաբկիր վարչական շրջանի Կասյան 3 հասցեներում գտնվող՝ սեփականության իրավունքով պատկանող, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ 01.01.2011թ. դրությամբ ունի 7735.6 հազար դրամ գումարի չափով գույքահարկի գծով հարկային պարտավորություններ /ապառք՝ 4206.9 հազար դրամ, տույժ՝ 3450.8 հազար դրամ, տուգանք՝ 77.9 հազար դրամ/, որի համար 15.09.2010թ. հ. ԳՄ-138 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին՝ գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:

Հայաստանի գրողների միությունը ֆինանսական լուրջ խնդիրներ ունի և չի կարողանում լուծել՝ ոչ միայն ստեղծագործական հարցեր, այլև կատարել իր պարտականությունները՝ վճարել գույքահարկ:

6. Հայաստանի նկարիչների միությունը Կենտրոն վարչական շրջանի Արովյան 16 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով պատկանող, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շինության մասով՝ 01.01.2011թ. դրությամբ ունի 3616.7 հազար դրամ գումարի չափով գույքահարկի գծով հարկային պարտավորություններ /ապառք՝ 2598.0 հազար դրամ, տույժ՝ 1018.7 հազար դրամ/, որի համար 15.09.2010թ. հ. 129 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին՝ գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:

Հայաստանի նկարիչների միությունը գտնվում է ֆինանսական սուղ պայմաններում և ունի բազում չլուծված խնդիրներ ու չկատարված պարտականություններ՝ գույքահարկի վճարումը:

Ի դեպ, Հայաստանի նկարիչների միությունը, որպես փոխհամագործակցություն պարտավորվում է՝ գեղարվեստական բարձր արժանիքներ ունեցող արվեստի գործեր տրամադրել մայրաքաղաքի քաղաքապետարանին:

7. «Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպությունը Կենտրոն վարչական շրջանի Իսահակյան 18, Քաջագնդունի 1, Իսահակյան 16, Իսահակյան 16ա և Վարդանանց 109 հասցեներում գտնվող՝ սեփականության իրավունքով պատկանող, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ 01.01.2011թ. դրությամբ ունի 2629.9 հազար դրամ գումարի չափով գույքահարկի գծով հարկային պարտավորություններ /ապառք՝ 734.4 հազար դրամ, տույժ՝ 1.7 հազար դրամ, տուգանք՝ 1893.8 հազար դրամ /, որի համար 03.12.2010թ. հ. 01-6/306 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին՝ գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:

Հայաստանի կույրերի միավորման կանոնադրական խնդիրներն են. տեսողությունից զուրկ հաշմանդամներին հաշվառելու, աշխատանքում ընդգրկելու, սոցիալական ռեաբիլիտացիայի, հասարակությանը ինտեգրելու, ինչպես նաև նրանց սոցիալական պաշտպանության ապահովման հարցերը, որոնց իրականացման համար ստեղծվել է ընկերություններ, որտեղ աշխատում են տեսողությունից զուրկ հաշմանդամներ:

Շուկայական հարաբերությունների պայմաններում միավորման ընկերությունների ոչ բավարար աշխատանքի հետևանքով Հայաստանի կույրերի միավորումը կանգնած է ֆինանսական դժվարությունների առջև, և չի կարողանում կատարել իր առջև դրված պարտականությունները՝ վճարել գույքահարկ:

9. «Սիլվա Կապուտիկյան» գրական հիմնադրամը Կենտրոն վարչական շրջանի Բաղրամյան անց. 12. 26բն. հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով պատկանող, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շինության մասով՝ 01.01.2011թ. դրությամբ ունի 193.1 հազար դրամ գումարի չափով գույքահարկի գծով հարկային պարտավորություններ /ապառք՝ 84.0 հազար դրամ, տույժ՝ 37.7 հազար դրամ, տուգանք՝ 71.4 հազար դրամ /, որի համար 24.11.2010թ. հ. 10/24296 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին՝ գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:

Ամենայն հայոց բանաստեղծուհի և Երևանի Պատվավոր քաղաքացի Սիլվա Կապուտիկյանի բնակարանը, իր իսկ կտակի համաձայն վերածվել է տուն-թանգարանի: Հետևաբար ֆինանսական միջոցների բացակայության պայմաններում հնարավորություն չի ընձեռնվում կատարել որոշակի պարտականություններ՝ վճարել գույքահարկ:

Հատկանշական է այն փաստը, որ վերոնշված միությունների, միավորումների և հիմնադրամի կողմից հաշվարկված գույքահարկի գծով հարկային պարտավորությունները մարելու դեպքում, Հայաստանի Հանրապետությունում նկատելի ձևով կընդլայնվի՝ թատերական գործիչների, կոմպոզիտորների և երաժշտագետների, ճարտարապետների, կինեմատոգրաֆիստների, գրողների ու նկարիչների, ստեղծագործական ազգանպաստ գործունեությունը, ինչպես նաև կույր հաշմանդամներին ցուցաբերվող օժանդակությունը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով նշված միությունների, միավորումների և հիմնադրամի կողմից մշտապես իրականացվող ստեղծագործական ազգանպաստ գործունեությունը՝ ինչպես Երևան քաղաքում այնպես էլ Հայաստանի Հանրապետության մարզերում, առաջարկվում է սահմանել 28,714,8 (քսանութ միլիոն յոթ հարյուր տասնչորս հազար ութ հարյուր) հազար դրամի չափով գույքահարկի գծով արտոնություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Ի
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող «Հայաստանի թատերական գործիչների միավորում» հասարակական կազմակերպությանը, «Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միավորում» հասարակական կազմակերպությանը, Հայաստանի ճարտարապետների միությանը, «Հայաստանի կինեմատոգրաֆիստների միավորում» հասարակական կազմակերպությանը, «Հայաստանի գրողների միություն» հասարակական կազմակերպությանը, Հայաստանի նկարիչների միությանը, «Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպությանը, «Միլվա Կապուտիկյան» գրական հիմնադրամին սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, շինությունների գույքահարկի գծով հարկային պարտավորությունները 01.01.2011թ. դրությամբ կազմում է 28,714,8 (քսանութ միլիոն յոթ հարյուր տասնչորս հազար ութ հարյուր) հազար դրամ, որի համար դիմել են Երևանի քաղաքապետին՝ օրենքով սահմանված կարգով գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:

Հաշվի առնելով միությունների, միավորումների և հիմնադրամի կողմից ներկայացված գրությունները գույքահարկի գծով հարկային պարտավորությունների մասով՝ արտոնություն ստանալու վերաբերյալ, նպատակահարմար եմ գտնում տրամադրել 28,714,8 (քսանութ միլիոն յոթ հարյուր տասնչորս հազար ութ հարյուր) հազար դրամի չափով գույքահարկի գծով արտոնություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Ի
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին»
որոշման նախագծի առնչությամբ այլ որոշումների ընդունման կամ այլ որոշումներում և/կամ/
փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ